ԿԲ նախագահը մասնակցել է «Firebird AI» նախագծի ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման արարողությանը

27.03.2026

Մարտի 26-ին ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը մասնակցել է «Firebird AI» մեգանախագծի ֆինանսավորման համար վարկային պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողությանը: Պայմանագիրը կնքվել է վեց ֆինանսական կառույցների, մասնավորապես Արդշինբանկի, Ակբա բանկի, Էվոկաբանկի, Ֆասթբանկի, «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ֆոնդի և «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ֆոնդի միջև:

Իր ելույթում ԿԲ նախագահն ընդգծել է, որ «Firebird AI» նախագծի ֆինանսավորումը վկայում է Հայաստանի բանկային և ֆինանսական համակարգի որակական զարգացման մասին՝ նշելով, որ այն արդեն ունի բավարար կարողություններ նման մասշտաբի և միջազգային նշանակության ծրագրերի գնահատման և իրականացման համար:

Միաժամանակ, նախագահը վերահաստատել է Կենտրոնական բանկի շարունակական ջանքերը՝ մակրոտնտեսական և ֆինանսական կայունության պահպանմամբ, վստահելի, թափանցիկ և կանխատեսելի կարգավորման միջավայր ապահովելու համար, ինչն ամուր հիմք կհանդիսանա նման ռազմավարական ներդրումների արդյունավետ իրականացման համար:

Միջոցառմանը ներկա են գտնվել նաև ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենը: